ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1-Ա

Արթիկ համայնք 23 հունվարի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 60-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Հարությունյան /
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Հարությունյան /
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2020 թվականի բյուջեի այլ մշակութային կազմակերպություններ բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Հարությունյան /
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերից ուղղակի վաճառքով <<Գրինֆուդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ընդլայնման նպատակով հողատարածքներ օտարելու և օտարման գին հաստատելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Հարությունյան /
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 62-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Հարությունյան/

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 57-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Հարությունյան /
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Հարությունյան /
8. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիոն ծրագրերին մասնակցելու և մասնակության հայտ ներկայացնելու համար Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի առաջարկությանը համաձայնություն տալու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Հարությունյան /

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Վարագյան Մեսրոպ

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Տարոն

Գասպարյան Վաղարշակ

Մկրտչյան Մուշեղ

Աբրահամյան Ալեքսան

Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի հունվարի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2 -Ն

Արթիկ համայնք

23 հունվարի 2020թվական

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և հիմք ընդունելով ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարի, համայնքի բյուջեի տարեվերջի ազատ միջոցների ճշտումները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 60-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները

1) եկամուտների գծով՝ 610210.0 հազար դրամ

2) ծախսերի գծով՝ 647280.2 հազար դրամ

3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 37070.2 հազար դրամ

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի.

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի.
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի.
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի:

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի)՝ ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան

Ղուլիջողյան Ռաֆիկ

Վարագյան Մեսրոպ

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Տարոն

Գասպարյան Վաղարշակ

Մկրտչյան Մուշեղ

Աբրահամյան Ալեքսան

Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի հունվարի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3-Ա

Արթիկ համայնք 23 հունվարի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի.

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան

Գասպարյան Վաղարշակ

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Հակոբյան Տարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի հունվարի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4-Ա

Արթիկ համայնք 23 հունվարի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի 2020թվականի բյուջեի այլ մշակութային կազմակերպություններ բաժնի ,,Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ'' (4239) հոդվածում նախատեսված գումարից կատարել հետևյալ հատկացումներ՝ ընդամենը 8080000 (ութ միլիոն ութսուն հազար) դրամ.

1) Զորակոչի կազմակերպման համար - 200000(երկու հարյուր հազար) դրամ
2) Տուֆաշխարհի ձմեռ - 1800000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) դրամ
3) Կանանց միջազգային օր– 600000 (վեց հարյուր հազար) դրամ
4) Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր –150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ
5) Քաղաքացու օր – 100000 (մեկ հարյուր հազար) դրամ
6) Հաղթանակի և խաղաղության տոն– 400000 (չորս հարյուր հազար) դրամ
7) Հանրապետության տոն – 800000 (ութ հարյուր հազար) դրամ
8) Երեխաների իրավունքների պաշտպանության օր– 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ
9) Երիտասարդների օր - 100000 (մեկ հարյուր հազար) դրամ
10) Անկախության օր – 700000 (յոթ հարյուր հազար) դրամ
11) Տարեցների օր – 100000 (մեկ հարյուր հազար) դրամ
12) Ուսուցչի օր -150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ
13) Ամանոր -2730000 (երկու միլիոն յոթ հարյուր երեսուն հազար) դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան

Գասպարյան Վաղարշակ

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Հակոբյան Տարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ _____ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի հունվարի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5-Ա

Արթիկ համայնք

23 հունվարի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ <<ԳՐԻՆՖՈՒԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Գրինֆուդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող և գործող ջերմոցային տնտեսության ընդլայնման նպատակով ընկերությունը ձեռք է բերել հողատարածքներ, որոնք իրեն պատկանող 9,6հա մակերեսով կառուցապատված հողատարածքի անմիջական շարունակությունն են: Ընկերությունը կառուցելու է ևս 6հա մակերեսով ջերմոցային տնտեսություն: Արթիկ համայնքի ղեկավարին է դիմել <<Գրինֆուդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Անդրանիկ Իգնատոսյանը ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի ընդլայնման նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասերը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել (տրամադրել) հրապարակային սակարկությունների միջոցով, Արթիկ համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ համայնքի Արթիկ-Գյումրի ճանապարհի աջակողմյան հատվածում գյուղատնտեսական նշանակության՝ 08-002-0504-0002 կադաստրային ծածկագրով 0,36001հա. մակերեսով, 08-002-0505-0001 կադաստրային ծածկագրով 0,16913հա. մակերեսով, 08-002-0203-0065 կադաստրային ծածկագրով 0,06028հա. մակերեսով, 08-002-0205-0039 կադաստրային ծածկագրով 0,08785հա. մակերեսով <<այլ հողատեսք>> գործառնական նշանակության և 08-002-0203-0097 կադաստրային ծածկագրով 0,06989հա. մակերեսով <<արոտավայր>> գործառնական նշանակության հողատարածքները որպես ընդլայնում ուղղակի վաճառքով օտարել <<Գրինֆուդ >> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 6-րդ կետով, 2016թվականի մայիսի 26-ի թիվ 550-ն որոշման 3-րդ կետով և հիմք ընդունելով <<Գրինֆուդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Անդրանիկ Իգնատոսյանի 2019թվականի. մարտի 27-ի N 680 դիմումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Գրինֆուդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող Սասունցի Դավթի 34 հասցեում գտնվող 9.62269հա /սեփականության վկայական N 26012018-08-0045/, 0,49հա /սեփականության վկայական N01022019-08-0050/, 1.58հա /սեփականության վկայական N 08072019-08-0019/, 0.3509հա /սեփականության վկայական N 08052019-08-0016/ և 1.09հա /սեփականության վկայական N 03042019-08-0019/ հողատարածքներին կից՝ Արթիկ-Գյումրի ճանապարհի աջակողմյան հատվածում գյուղատնտեսական նշանակության՝ 08-002-0504-0002 կադաստրային ծածկագրով 0,36001հա. մակերեսով /սեփականության վկայական N 21012020-08-0005/, 08-002-0505-0001 կադաստրային ծածկագրով 0, 16913հա. մակերեսով /սեփականության վկայական N21012020-08-0036/, 08-002-0203-0065 կադաստրային ծածկագրով 0,06028 հա. մակերեսով /սեփականության վկայական N 21012020-08-0022/, 08-002-0205-0039 կադաստրային ծածկագրով 0,08785հա. մակերեսով

/սեփականության վկայական N 21012020-08-0004/ <<այլ հողատեսք>> գործառնական նշանակության և 08-002-0203-0097 կադաստրային ծածկագրով 0,06989հա. մակերեսով /սեփականության վկայական N21012020-08-0003/ <<արոտավայր>> գործառնական նշանակության հողատարածքները որպես ընդլայնում ուղղակի վաճառքով <<Գրինֆուդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օտարելու առաջարկությանը:

2. <<Գրինֆուդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պարտավորեցնել այլ սեփականատերերի մոտեցման ճանապարհ ապահովվելու համար կատարել մշտական անվճար սերվիտուտի իրավունքի պետական գրանցում:
3. Հողամասերի ուղղակի վաճառքով օտարման գին հաստատել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ գյուղատնտեսական այլ հողատեսքերի՝ 1հա-ի համար 127500 Հայաստանի Հանրապետության դրամ և գյուղատնտեսական արոտավայր՝ 1հա-ի համար 380000 Հայաստանի Հանրապետության դրամ: Գյուղատնտեսական այլ հողատեսքի հողակտորների համար վճարվելիք գումարը կազմում է 86351.93 (ութանասունվեց հազար երեք հարյուր հիսունմեկ դրամ իննսուներեք լումա) Հայաստանի Հանրապետության դրամ և գյուղատնտեսական արոտավայրի համար՝ 26558.20 (քսանվեց հազար հինգ հարյուր հիսունութ դրամ քսան լումա) Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը մուծման ենթակա է 112910.13 (հարյուր տասներկու հազար ինը հարյուր տաս դրամ տասներեք լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան		Գասպարյան Վաղարշակ	
Ղուլիջողյան Ռաֆիկ		Մկրտչյան Մուշեղ	
Վարագյան Մեսրոպ		Աբրահամյան Ալեքսան	
Նիկողոսյան Արմեն		Հակոբյան Հարություն	
Հակոբյան Տարոն			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի հունվարի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6-Ա

Արթիկ համայնք 23 հունվարի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով արցախյան ազատամարտիկ Վոլոդյա Զոհրաբյանի մահվան հանգամանքը և նրա կնոջ՝ Քնարիկ Հովհաննիսյանի 2019թվականի մայիսի 9-ի N 1137 դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1) Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 62-Ա որոշման թիվ 4 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրված օգնության ցուցակի N 9 տողում գրված <<Վոլոդյա Զոհրաբյան>>-ի անուն ազգանվան փոխարեն գրել <<Քնարիկ Հովհաննիսյան>> անուն, ազգանունը:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան

Գասպարյան Վաղարշակ

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Հակոբյան Տարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2020թվականի հունվարի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7-Ա

Արթիկ համայնք 23 հունվարի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1, 2, 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 57-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Թիվ 57- Ա որոշմամբ հաստատված հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակից հանել 2-րդ կետում գրված <<Փոխտնօրեն 1>> դրույք և <<89610>> (ութսունինը հազար վեց հարյուր տաս) պաշտոնային դրույքաչափերը բառերը և թվերը:

2) Թիվ 57- Ա որոշմամբ հաստատված հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում <<Նկարիչ ձևավորող 0.5>> դրույք թվի փոխարեն գրել <<Նկարիչ ձևավորող 1>> դրույք թիվը և աշխատավարձի չափ՝ <<44805 (քառասունչորս հազար ութ հարյուր հինգ)>> թիվը և բառերը փոխարինել <<89610 (ութսունինը հազար վեց հարյուր տաս)>> թվով բառերով:

3) Թիվ 57- Ա որոշմամբ հաստատված հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում <<Տեխնիկական սպասարկող 0.5>> դրույք թվի փոխարեն

գրել << Տեխնիկական սպասարկող 1>> դրույք թիվը և <<44805 (քառասունչորս հազար ութ հարյուր հինգ)>> թիվը և բառերը փոխարինել <<89610 (ութսունինը հազար վեց հարյուր տաս)>> թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի փետրվարի 1-ից:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան

Գասպարյան Վաղարշակ

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Հակոբյան Տարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի հունվարի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8-Ա

Արթիկ համայնք 23 հունվարի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքապետարանի համապատասխան հանձնաժողովի կողմից 2020թվականի հունվարի 17-ին նախկին օպերատորի հետ կազմած հանձնման-ընդունման արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արթիկ համայնքում աղբահանություն իրականացնելու համար 2020 թվականի հունվարի 15-ին պայմանագիր է կնքվել նոր կազմակերպության՝ <<Շինարար Նարե>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ, ուստի անվարձահատույց, համայնքում իրականացվող աղբահանության աշխատանքների համար օգտագործման տրամադրել համայնքապետարանին պատկանող թվով 205 աղբարկղերը համայնքի աղբահանության մրցույթում հաղթող ճանաչված <<Շինարար Նարե>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մինչև նշված կազմակերպության հետ համայնքապետարանի կողմից կնքված աղբահանության պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան		Գասպարյան Վաղարշակ	
Ղուլիջողլյան Ռաֆիկ		Մկրտչյան Մուշեղ	
Վարագյան Մեսրոպ		Աբրահամյան Ալեքսան	
Նիկողոսյան Արմեն		Հակոբյան Հարություն	
Հակոբյան Տարոն			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի հունվարի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9-Ա

Արթիկ համայնք 23 հունվարի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Արթիկ համայնքի ղեկավարի առաջարկությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու և մասնակցության հայտ ներկայացնելու առաջարկությանը հետևյալ ծրագրերի համար.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի փողոցների տուֆ քարով սալապատում և բարեկարգում

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան

Գասպարյան Վաղարշակ

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Հակոբյան Տարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2020թվականի հունվարի 23